

ԿՐՈՆԱԿԱՆ

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՂԻՄԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(25 նոյեմբերի 2001 թ.)

«Յանուն Հօր ևս Որդոյ ևս Հոգւոյն Սրբոյ. ամեն»:

«Ամեն ասեմ ձեզ. զի հոգի առաւել է, քան զմարմին»:

Ավետարանի պարզաման է այս՝ մեզ տրված այսօր Ճաշու Ավետարանի ընթերցման պահին: Հիսուսի խոսած հրաշալի առակներից մեկի պատումից հետո այս ճշմարտությունն է ուսուցվում մեզ, թե՛ «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ հոգին առաւել է, քան մարմինը»:

Հիսուս իր քարոզության երեք փառքների ընթացքում հաճախ առակներով էր իր միտքը բացատրում և իր ասելիքը համեմուն: Նրա խոսած գեղեցիկ առակներից մեկը, որ այսօր ընթերցվեց այս խորանից Ս. Պատարագի Ճաշու ընթերցվածների պահին, այն մասին է, թե կյանքի մեջ ուրելիքի և հագնելիքի մասին շատ չմտածներ և չմտածողներ, այլ մտածողներ մեր հոգիների՝ մասին:

Հիսուսի խոսած առակը հետևյալն է.

Մի մեծահարուստ անձ՝ դաշտերի և անդաստանների տեր, երբ աշնան սկզբում տեսնում է, թե ինչքան առատ է բերքը, ասում է ինքն իրեն. «Շտեմարաններս պիտի մեծացնեմ, ամբարներս պիտի ընդարձակեմ, որպեսզի հավաքեմ բարիքները, որ ինձ տրված են՝ ցորենը, գարին և ամեն տեսակ ընդեղենները: Եվ այդ բոլորը իմ ամբարներում հավաքելուց հետո պիտի ասեմ իմ անձին. «Կեր, խմիր և ուրախ եղիր»:

Այսօր էլ մեր մեջ, հավանաբար, այսպես մտածող անձինք շատ կան, որոնք իրենց ապրուստն ապահոված և հանգիստ կյանք ձեռք բերած ժամանակ հաճախ իրենք իրենց ասում են՝ կեր, խմիր և ուրախ եղիր: Բայց մեր կյանքը սահմանավոր կյանք է: Չգիտենք, թե երբ է Գաբրիել հրեշտակապետը մեր դուռը բացելու և ներս մտնելու՝ փանելու համար այն, ինչ որ Աստծու կողմից մեզ, որպես շնորհ, տրված է՝ մեր երկրային կյանքը, մեր հոգին: Այդ մեծահարուստը, որ աչքի էր ընկնում իր ընչաքաղցությամբ և փարված էր նյութամոլությամբ, բոլորովին մոռացել էր իր հոգու մասին: Տերը նրան ասում է. «Անմիտ, այս գիշեր քեզանից պիտի առնվի քո հոգին»:

Ու՛մ էր մնալու այն ամբողջ բերքը, այն ամբողջ հարսությունը, որ նա դիզել էր: Ավետարանը պարզամուն և ասում է մարդկանց. «Նայեցե՛ք երկնքի թռչուններին, որոնք ո՛չ սերմանում են և ո՛չ էլ հնձում, բայց Աստված ժամանակին նրանց փայխա է իրենց հասանելիք կերակուրը»: Իսկ ինչքի մասին մտածողների համար ասում է. «Նայեցե՛ք հովիտների շուշաններին, նայեցե՛ք դաշտերի ծաղիկներին, որոնք այնքան գեղեցիկ կերպով Աստծու կողմից զգեստավորված են»: Նույնիսկ Սողոմոն ի-

մասպունը՝ փիլիսոփա բանաստեղծ թագավորը, իր փառքի օրերին չկարողացավ նրանց պես գեղեցիկ հագնվել և զարդարվել: Ուրեմն ինչո՞ւ ենք մենք մրափոխվում ուրվելիքի և հագնելիքի համար: Բայց մարդու երևակայությունը չի սահմանափակվում միայն ուրվելիքով և հագնելիքով: Մարդիկ անսահմանորեն ընչաքաղց են դարձել, հափշտակվում են ուրիշների իրավունքները և թույլ չեն տալիս, որ ուրիշները ևս կարողանան այս կյանքում հանգիստ, խաղաղ և ապահով իրենց հացը գտնել և այն վայելել:

Սակայն, սիրելի հավատացյալներ, մենք նաև պիտի ասենք և ավելացնենք, որ մարդը, որպես բանական էակ, կենդանիներից տարբերվում է իր իմացականությամբ, իր խոսքով, իր քրամաբանելու կարողությամբ, այդ պատճառով էլ վաղվա օրը բոլորովին անտեսելը հավանաբար մարդու նկարագրին անհարիր է: Այսուհանդերձ մենք վաղվա մասին շատ պետք է մրափոխվենք՝ մեր քունը կորցնելու աստիճան, այլ մեր մրափոխությունները պետք է թողնենք Աստծուն, որ մեր Արարիչն է և գիտն ամենալավը տնօրինել մեզ համար: Բայց Ավետարանի պատգամն այն է, որ մենք ավելի մրափոխվենք մեր նմաններով և նրանց համար կարողանանք երջանիկ կյանք ստեղծել, միջոցներ հայթայթել, որպեսզի նրանք ևս իրենց կյանքի ընթացքում չգրկվեն բնության բարիքներից օգտվելու իրավունքից, այլապես մարդը, որպես ընչաքաղց, անձնասեր, որպես անձնակենսաբան արարած կարող է նշավակ դառնալ Աստծու զայրության: Մարդը պետք է Աստծու վախը իր մեջ ունենա, որպեսզի կարողանա իր կյանքը ուղիղ ընթացքի մեջ դնել և արդարությամբ, ողորմածությամբ և մարդասիրությամբ ապրել այս կյանքում:

Բացի նյութական կարիքները բավարարելու մրափոխությունից, այս կյանքում հոգևոր արժեքների մասին ևս պետք է հոգ տարվի: Այս իմաստով, ովքեր հավատացյալ են և ունեն իրենց տրված աստվածային շնորհը և կարողանում են այդ շնորհը իրենց գործով բազմապատկել և օգտագործել կյանքի մեջ, այդ մարդիկ անհրաժեշտորեն պետք է կարողանան իրենց շնորհներից և բարիքներից ուրիշներին բաժին հանել, այսինքն՝ իրենց հոգևոր կյանքը հաղորդակցությամբ բաժանել ուրիշների հետ և այդպիսով ճանապարհ բացել իրենց նմանների համար ևս երջանիկ և խաղաղ կյանք ապրելու, հոգեկան, մշակութային կյանքի ուղորդները բարձրացնելու նրանց և տալու հոգևորը վայելելու առիթը: Այս շնորհները մեզ տրվում են Աստծու կողմից մկրտության միջոցով, Սուրբ Հաղորդության ընդունման միջոցով անսակարկ կերպով:

Հարց տանք մեզ. արդյո՞ք հոբելյանական այս անցնող տարին մեզ համար եղավ հոգևոր իմաստով տոնակատարությանց մի տարի: Անցնող այս տարվա ընթացքում մենք տոնեցինք Վարդանանց հերոսամարտի 1550-րդ տարեդարձը, նաև նշեցինք Հայաստանի անկախ Հանրապետության հռչակման տասնամյակը և, ի մասնավորի, Հայաստանյայց Եկեղեցին և մեր պետությունը միասնաբար տոնեցին Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակը:

Սիրելի՛ հավատացյալներ, ի՞նչ չափով և ինչպե՞ս կարողացանք մասնակցել մենք վերոհիշյալ տոնակատարությանց: Կարողացա՞նք այս տոների միջոցով ստանալ

այն, ինչ որ պակասում էր մեզ, այսինքն՝ հոգեփոխվել: Կարողացա՞նք, արդյոք, այս փոնակափարությանց օրերին օգտակար լինել մեզ նմաններին, ծառայել թույլին, փրկարին և զոհաբերության ճանապարհով ուրախություն պարգևել մեր շրջապատին: Եթե մեր մեջ կային այնպիսի մարդիկ, ովքեր անսվաղ էին, լքված և անփութին: Եթե մեր մեջ կային հաղորդվելու ոչ մի միջոց չունենին, կարողացա՞նք օգնել վաճառված էին, մարդկանց հետ հաղորդվելու ոչ մի միջոց չունենին, կարողացա՞նք օգնել նրանց, կարողացա՞նք մեր օգնությամբ բարձրացնել նրանց իրենց առօրյա մտահոգություններից վեր, դուրս բերել իրենց ցավի ու փառաստանի միջից, որպեսզի նրանք ևս փառք փայլեն Բարձրյալին, որ մեզ միջոց էր դարձրել նրանց մխիթարելու ճանապարհին: Միայն նյութական իմաստով չի փրկվելու այս օգնությունը, այլ նաև՝ բարոյական և հոգևոր իմաստով: Եթե կարողանանք մեր աղոթքներով, մեր զոհողությամբ, Սուրբ Պապարագներով, հանդիսություններով ու փոնակափարություններով մեկ անգամ ևս իջեցնել Աստվածորդուն երկնքից երկիր, այն ժամանակ մենք ամենաերջանիկ ժողովուրդը և անհափնեղ կարող ենք համարվել: Իսկ եթե անփարբերությունը մեզ պաշարի, և մենք բոլոր հանդիսություններին անհաղորդ մնանք, մեր հոգու դռները փակենք Աստծու հանդեպ, մեր աղոթքը չառաքենք Բարձրյալին, ի՞նչ շահ կարող ենք ունենալ, ի՞նչ դաս կարող ենք քաղել 1700-ամյակի փոնակափարությունից. մենք կգրկվենք աստվածային ողորմածությունից և կդառնանք մեր հոգիների կորստյան պարճառը:

Միևնի՜ հավաքացյալներ, անմիջ մեծափութը մտածում էր միայն իր հանգստի, փառքի, հարստության, կյանքի ապահովության և վաղվա ապրուստի մասին: Բայց մենք՝ հոգևոր և իմացական կյանքով ապրողներս, Աստծու կողմից բազում շնորհներ ստացած մարդիկս, արդյոք հոբելյանական այս փառում կարողացա՞նք մեր հոգիների դռները բացել առ Աստված, մեր աղոթքներով, մեր խնդրանքներով և սպառափանքներով կարողացա՞նք հաղորդակցվել երկնքի հետ:

Աստված խնամարկողն ու տերն է բոլորիս և մանավանդ իր «փոքր հոսիին», որ հայ ազգն է Հայաստանում և Մփյուռքում: Մենք այսօր հավատում ենք, որ անմիջ մեծափութ օրինակը մեր կյանքում մեզ կզգաստացնի և մեզ առիթ կընծայի, որ մեր առօրյա մտահոգությունների շարքում մտահոգվենք նաև մեր հոգիների փրկությամբ, և երբ մեր կյանքի օրերը իրենց վախճանին հասնեն, կարողանանք կանգնել մեր Տիրոջը դեմհանդիման և ասել. «Ծառայք անպիտանք եմք, զոր ինչ պարտ էր առնել արարաբ»:

Թող Աստծու շնորհները փեղան մեզ վրա առափորեն և գեղեցկացնեն մեր կյանքը Հոգու շնորհներով այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն: